World Theatre Day Message 2022
Peter Sellars
Armenian

Քանի որ աշխարհը ժամ առ ժամ, րոպե առ րոպե կառչած է լուրերի ամենօրյա հոսքից, ես ցանկանում եմ հրավիրել բոլորիդ ուշադրությունը մեզ՝ որպես ստեղծագործողներ, մուտք գործելու այս էպիկ փոփոխությունների, տեսլականի և հեռանկարների ժամանակաշրջան: Մենք ապրում ենք մարդկության պատմության աննախադեպ ժամանակաշրջանում, և այն խորը և հետևանքային փոփոխությունները, որոնք մենք ապրում ենք մարդկային և ոչ մարդկային աշխարհների հարաբերություններում, գրեթե վեր են մեր խոսելու, արտահայտելու և ընկալելու կարողություններից:

Մենք չենք ապրում 24-ժամյա լրատվական ցիկլում, մենք ապրում ենք ժամանակի եզրին: Թերթերն ու լրատվամիջոցները լիովին անզոր են հաղորդելու այն ամենը ինչ մենք զգում և ապրում ենք:

Որտե՞ղ է լեզուն, շարժումը և պատկերը, որոնք կարող են մեզ թույլ տալ ընկալելու այս խորքային փոփոխությունները, որոնց միջով մենք անցնում ենք: Եվ ինչպե՞ս կարող ենք հենց հիմա մեր կյանքի փորձառությունը փոխանցել մարդկանց, սակայն ոչ թե որպես ռեպորտաժ, այլ որպես իրական կյանքի փորձ:

Թատրոնը փորձի արվեստն է:

Մի աշխարհում որը ծանրաբեռնված է մամուլի լայնածավալ արշավներով, ամենօրյա լրատվությամբ, սարսափազդու կանխատեսումներով, ինչպե՞ս կարող ենք անցնել այս անվերջ

կրկնությունից անդին՝ զգալու կյանքի, բնության, ընկերության անսահմանությունը: Քովիդյան երկու տարիները թուլացրել են մարդկանց զգացմունքները, սահմանափակել մարդկանց կյանքը, խզել են հարաբերությունները և մեզ հասցրել մարդկային բնության տարօրինակ և զրոյական կետի:

Ի՞նչ սերմեր պետք է տնկվեն այս տարիներին, որոնք՞ են գերաճած և ավելորդ տեսակները տնկիների, որոնք պետք է ամբողջությամբ և վերջնականապես հեռացվեն: Այսօր այնքան շատ մարդիկ են այդ եզրին: Այնքան շատ է անտրամաբանական և անսպասելի բռնությունը, և այնքան շատ են հաստատված համակարգերը, որոնք բացահայտվել են որպես դաժանություն սփռող կառույցներ:

Որտե՞ղ են մեր հիշատակի արարողակարգերը: Ի՞նչ պետք է հիշենք: Որո՞նք են այն արարողությունները, որոնք թույլ են տալիս մեզ, ի վերջո, վերահիմաստավորել և սկսել անել այն քայլերը, որոնք նախկինում երբեք չենք արել:
Տեսլականի, հեռանկարի, վերականգնման և վերահիմաստավորման թատրոնը նոր արարողակարգերի կարիք ունի: Մեզ պետք չէ զվարճանք: Մեզ պետք է համախմբում: Մենք պետք կիսենք այս տարածությունը, և մշակենք այն՝ պաշտպանելով և պահպանելով հավասարություն:

Թատրոնը երկրի վրա մարդկանց, աստվածների, բույսերի, կենդանիների, անձրևի և վերածննդի միջև հավասարության տարածության ստեղծումն է: Թատրոնում այդ տարածությունը լուսավորված է թաքնված գեղեցկությամբ, որը կենդանի է պահում իմաստության և գեղեցիկի փոխազդեցությունը:

The Flower Ornament Sutra-ում Բուդդան թվարկում է մարդկային կյանքում հանդիպող հաստատակամության տասը տեսակ: Ամենահզորներից մեկը կոչվում է հաստատակամություն բոլորին որպես պատրանք ընկալելու մեջ: Թատրոնը միշտ ներկայացրել է այս աշխարհի կյանքը որպես պատրանք, որը մեզ հնարավորություն է տալիս տեսնելու մարդկային պատրանքը, մոլորությունը, կուրությունը, պարզությունը և ուժը:
Մենք այնքան վստահ ենք, թե ինչպես ենք նայում այս ամենին, որ չենք կարողանում տեսնել և զգալ այլընտրանքային իրողությունները, նոր հնարավորությունները, տարբեր մոտեցումները, աննշմարելի հարաբերությունները և հավերժական կապերը:

Հիմա մեր մտքերի, զգացումների, երևակայության, պատմության և ապագայի թարմացման ժամանակն է: Այս ամենը չեն կարող անել միայնակ և մեկուսացված աշխատող մարդիկ: Սա աշխատանք է, որը մենք պետք է անենք միասին: Թատրոնը այս գործը համախմբված անելու համար է:

Translator Kristina Garanyan
Armenian Center of ITI